



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 օգոստոսի 2014 թվականի N 882 - Ա

ԳՈՒՅՔԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆ
ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Որպես նվիրատվություն ընդունել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքային համայնքին սեփականության իրավունքով պատկանող՝ Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի 3/7 հասցեում գտնվող՝ 6205494 դրամ կադաստրային արժեքով, 0,324216 հեկտար մակերեսով հողամասը՝ որպես պետական սեփականություն:

2. Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի 3/7 հասցեում գտնվող՝ 6205494 դրամ կադաստրային արժեքով, 0,324216 հեկտար մակերեսով հողամասը (այսուհետ՝ գույք 1), Հայաստանի Հանրապետությանը սեփականության իրավունքով պատկանող՝ Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի 3/3 հասցեում գտնվող՝ 7520106 դրամ կադաստրային արժեքով, 0,3929 հեկտար մակերեսով հողամասը (այսուհետ՝ գույք 2), Հայաստանի Հանրապետությանը

սեփականության իրավունքով պատկանող՝ Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի 3/3 հասցեում գտնվող՝ 3790342531 դրամ ընդհանուր նախահաշվային արժեքով, 11276,47 քառ. մետր մակերեսով շենքը, 110,870 քառ. մետր մակերեսով կաթսայատունը և պարիսպը (այսուհետ՝ գույք 3) ներդնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալում՝ այդ գույքի արժեքի չափով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ավելացնելով ընկերության կանոնադրական կապիտալը՝ լրացուցիչ բաժնետոմսեր թողարկելու միջոցով:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին՝

1) ապահովել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող՝ Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի 5/13 հասցեում գտնվող՝ 11814356 դրամ կադաստրային արժեքով, 0,61726 հեկտար մակերեսով հողամասի (այսուհետ՝ գույք 4) նվիրատվության իրականացումը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն)՝ համապատասխանաբար ավելացնելով ընկերության կանոնադրական կապիտալը՝ նվիրատվության պայմանագրում սահմանելով, որ սույն ենթակետում նշված պայմանագրի կնքման և դրանից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերն իրականացվում են ընկերության միջոցների հաշվին.

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում ապահովել՝

ա. Գյումրու քաղաքապետի հետ Հայաստանի Հանրապետության անունից գույք 1-ի նվիրատվության պայմանագրի կնքումը, հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը և գույքային իրավունքների պետական գրանցումը,

բ. սույն որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերությունում նշված աշխատանքների ավարտից հետո գույք 1-ի, գույք 2-ի, գույք 3-ի, գույք 4-ի հանձնման-ընդունման

աշխատանքների կատարումը և գույքային իրավունքների պետական գրանցումը՝ ընկերության միջոցների հաշվին,

գ. սույն որոշումից բխող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի ավելացումը, կանոնադրության մեջ համապատասխան փոփոխության կատարումը և գրանցումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2014 թ. օգոստոսի 28
Երևան

